ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 28 » 12 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000134

Ձեռնարկողը՝ ***«Հայնախագիծ» ԲԲԸ***
ք. Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝ ***Արմավիր-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի մշակման ՇՄԱՌԳ հաշվետվություն***
Արմավիրի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000134

< 28 **>** 12 **2020թ.**

Արմավիրի մարզի Արմավիր-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի մշակում ՇՄԱՌԳ հաշվետվություն

Ձեռնարկող՝ «Հայնախագիծ» ԲԲԸ

Ներկայացված նյութեր՝ Հիմնադրութային փաստաթուղթ

Գտնվելու վայրը՝ Արմավիրի մարզ

Ներածական մաս. Արմավիրի տարածաշրջանի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (այսուհետ ՄՄՀՏՊՓ) նախագծերը ներառում են Ամասիա, Արաքս, Բերքաշատ, Գետաշեն, Նալբանդյան, Նոր Արմավիր, Նոր Արտագերս, Նոր Կեսարիա, Գենավան, Ջրաշեն (ընդամենը 10) գյուղական համայնքները: Արմավիրի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագծի Շրջակա միջավայրի բարելավման ու պահպանման միջոցառումներ բաժինը մշակված է ՄՄՀՏՊՓ համապատասխան, հաշվի առնելով նշված համայնքների 2017-2021 թթ. զարգացման ծրագրերը:

Նկարագրական մաս. Արմավիրի մարզի վերը նշված գյուղական համայքների տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով են գնահատվել առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Բնակավայրերի զարգացման ծրագրերի մշակման ժամանակ շրջակա միջավայրի տարրերի (ջուր, օդ, հողաբուսական ծածկույթ, կենդանական աշխարհ) պահպանության միջոցառումների մշակումը սերտորեն կապված է տարածքի հատակագծային կազմակերպման խնդիրների հետ:

Արմավիրի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ զարգացման ծրագիրը նախատեսվում է կազմել կայուն զարգացման սկզբունքների հիման վրա:

Արմավիրի մարզի բնապահպանական հիմնախնդիրները կապված են աղակալված և դեգրադացված հողերի դեմ պայքարի միջոցառումների, հողերի էռոզիայի դեմ պայքարի, կենսաբազմազանության պահպանման, օգտակար հանածոների և ջրային պաշարների, տարբեր տեսակի թափոնների վերամշակման, կենցաղային աղբաթափության կազմակերպման ու պահպանման և բնակչությանը խմելու մաքուր ջրով ապահովելու պլանի

արդյունավետ իրականացման հետ, որը կարող է երաշխավորել մարզում բնապահպանական իրավիճակի բարելավման կայուն հիմքերը:

Մարզի զարգացման ծրագրով անհրաժեշտ է շուրջ 5000հա աղուտ-ալկալի հողերի աղազերծում, որի իրագործումն ընթանալու է մի քանի փուլերով.

Մարզում արտադրված գոմաղբի ծավալները հասնում են 350-450 հազ. տոննայի, որը ներկայումս օգտագործվում է անարդյունավետ և անգամ հակասանիտարական վիճակ ստեղծում բնակավայրերում:

Առկա տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս գոմաղբի ճիշտ կուտակման, պահպանման և վերամշակման միջոցով ստանալ կենսավառելիք՝ գազի տեսքով, որը կարելի է օգտագործել էլեկտրաէներգիայի արտադրության և ջեռուցման նպատակով:

Ներկայումս մարզում ոռոգման համար օգտագործվում է 200-300մլն.մ^3 ոռոգման ջուր, նշված ջրի քանակի 45-55%-ը կորչում է ջրատարներում՝ մինչև ջրօգտագործողին մատակարարելը, որը տնտեսական մեծ վնասից բացի իրենից լուրջ վտանգ է ներկայացնում շրջակա միջավայրի աղտոտվածության և հողերի էռոզիոն պրոցեսների ուժեղացման տեսանկյունից:

Երևույթի կանխման համար անհրաժեշտ է մարզում ներդնել ոռոգման նոր մեթոդներ՝ կաթիլային և անձրևացման եղանակների ներդրում, ստորգետնյա ոռոգման ցանցի անցկացում: Ոռոգման համակարգերի կառավարման նոր պլանների մշակումը հատկապես կարևոր է գերնորմատիվային ոռոգման ջուր օգտագործող համայնքների համար:

Մարզի համար հրատապ հիմնախնդիր է կոշտ կենցաղային և արտադրական թափոնների հավաքման, տեղափոխման, տեղադրման և աղբավայրերի կառավարման խնդիրը, որը բացասական ազդեցություն է թողնում բնակավայրի էկոլոգիական վիճակի, շրջակա միջավայրի աղտոտվածության և մարզի ռեկրեացիոն գոտու հեռանկարի վրա: Արմավիրի մարզի 97 համայնքներում կազմակերպվում է աղբահանություն, մարզում առկա է 69 աղբավայր: Քաղաքների և խոշոր բնակավայրերի հատակագծերով նախատեսված աղբավայրերի կառավարման պլանների մշակում, աղբավայրերի ցանկապատման աշխատանքների իրականացում, միջհամայնքային աղբավայրերի նախագծում և դրանց շահագործման տեխնիկական միջոցների տրամադրում:

Մարզի ջրային աղբյուրների, ոռոգման ջրատարների և գետերի աղտոտվածության հիմնական աղբյուրը կենցաղային կեղտաջրերն են: Անհրաժեշտ է ուսումնասիրել կեղտաջրերի մաքրման ոչ ծախսատար տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները:

Հաշվի առնելով տարերային աղետների հետևանքով՝ կարկտահարություն, ուժեղ քամիներ, հեղեղումներ, մարզի գյուղատնտեսական արտադրության և բնակավայրին հասցված վնասները, անհրաժեշտ է մշակել և ապահովել հուսալի կանխատեսումների և նախազգուշացումների ծառայությունների գործուն համակարգ, հակակարկտային համակարգի ներդրում, դաշտապաշտպան անտառաշերտի հիմնում:

Արմավիր 2 տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագծում սանիտարապաշտպանիչ գոտիների և սանիտարական խզման (разрыв) չափերը ընդունված են համաձայն СН245-71 «Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմաներ»: Հաշվի է առնված նաև ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հիգիենիկ և համաճարակային բաժնի համաձայնությունը:

Էլեկտրաենթակայանների ՍՊԳ-ի չափերը ընդունված է դրանց տիպից, տրվող լարումից, տրանսֆորմատորի հզորությունից և քանակից ելնելով, համաձայն ՍՆ և Կ II-12-77 «Պահպանություն աղմուկից» և ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» նորմերի և կանոնների, ԳՈՍՏ «Ուժային, յուղային տրանսֆորմատորմներ, թույլատրելի աղմուկի նորմաներ և աղմուկային փորձարկումների մեթոդներ»: ՍՊԳ-ների չափը ընդունված է 20 մ:

Արմավիր 2 տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագիծը ընդգրկում է 9419,69հա տարածք, որտեղ բնակչության թիվը կազմում է 19078 մարդ: Տարածքում առկա են բնական, բուժական, առողջապահական, հանքահումքային ռեսուրսները: Ներկա իրավիճակում բնակչության հիմնական զբաղմունքն է՝ գինեգործությունը, բուսաբուծությունը, այգեգործությունը, անասնապահությունը, հացահատիկի մշակությունը, հողագործությունը, մեղվաբուծությունը և առևտուրը:

Նշված գյուղական համայնքներում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 1370,034հա մակերես 10 հատ աղբավայր: Աղբահանումը կատարվում է անկանոն, ինչը հանգեցնում է համայնքների սանիտարական վիճակի վատացմանը: Հեռանկարում նախատեսվում է գոյություն ունեցող աղբավայրերի տարածքները պարսպապատել, բարեկարգել, մինչև ամբողջ համայնքների համար աղբամշակման գործարանի նախագծումը և կառուցումը, կամ կազմակերպել աղբի տեսակավորում:

Թափոնները առաջանում են արդյունաբերական ձեռնարկություններում: Արդյունաբերական թափոնների ընդհանուր քանակը կազմում է 1,2 տ/տարի:

Քանի որ, համայնքները չունեն արդյունաբերական թափոնների համար առանձին աղբավայր, ուստի ոչ օգտագործելի նշված թափոնները թափվում են կենցաղային աղբավայրում:

Արմավիր-2 համայնքների համար աղբի հեռացման, տեսակավորման և վերամշակման վայր նախատեսել Արմավիր քաղաքի հարակից 8հա մակերես ունեցող աղբավայրը միաժամանակ կոնսերվացնելով համայնքներում առկա աղբավայրերը:

Համայնքների զարգացման հիմնական ուղղություններն են.

- արտադրության հիմնական ճյուղերի զարգացումը,
- հնարավոր ռեկրեացիոն գոտիների կազմակերպումը,
- շրջակա միջավայրի բարելավումն և պահպանումը,
- ինժեներական ենթակառուցվածքի, ճանապարհային ցանցի և սոցիալ-կենցաղային համակարգի զարգացումը,
- պատմամշակութային ժառանգության պահպանությանը,
- բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը,
- սահմանամերձ տարածքներում բնակչությանանվտանգության ապահովումը,
- միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհները կապող հատվածների վերանորոգում, միջհամայնքային ճանապարհների կապերի վերանայում և կազմակերպում,
- Ախուրյան գետի վրա նոր ջրամբարի կառուցում, ինչը կթեթևացնի Սևանա լճի բեռնվածությունը,
- բացառել գյուղատնտեսական բարձորակ և հատուկ պահպանվող տարածքների օտարումը, ինչպես նաև պատմամշակութային և բնական հուշարձաններին վնասի պատճառումը,
- հիմնական գործառնական գոտիների վերանայում և հստակեցում,
- բոլոր համայնքների գազաֆիկացում,
- համայնքներում բնակչության ապահովումը խմելու ջրով,
- համայնքներում ոռոգման ջրի ցանցի արդիականացում և ընդլայնում,
- աղբավայրերի նախատեսում սանիտարական գոտիների պահպանմամբ,
- բոլոր համայնքների կեղտաջրերի մաքրման կայանի նախագծում և կառուցում,
- նախատեսել նոր տեխնոլոգիաներ ջեռուցման ժամանակ՝ արևային էներգիա և բիոգազ,
- նախատեսել աղբի տեսակավորում:

Արմավիր-2 տարածաշրջանի ՄԱՀՏՊՓ ընդգրկում է 9419,69հա տարածք: Տարածքային պլանավորման նախագծով հողերի նպատակային նշանակության հողատեսքի, գործառնական նշանակության և զբաղեցրած տարածքների խոշորածավալ էական փոփոխություն չի

նախատեսվում: Տարածաշրջանի բնակչության հաշվարկային թիվը կազմում է 19078 հազ.մարդ:

ԱՐՄԱՎԻՐ -2 ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ			
ՑՈՒՑԱՆԻՇԸ	ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐԸ	ՓԱՍՏԱՑԻ	ՀԵՌԱՆԿԱՐԱՑԻՆ
1	2	3	4
ՀԱՄԱՅՆՔԻ, ՀԱՄԱԿՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ	հա	**9490.73**	**9490.73**
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ	հա	**1455.73**	**1465.684**
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	հա	**220.31**	**218.63**
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝	հա	**79.96**	**109.89**
ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ	հա	**114.54**	**115.59**
ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	հա	**82.8**	**77.91**
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	հա	**7295.21**	**7262.006**
ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐ	հա	**0**	**0**
ՋՐԱՅԻՆ ՀՈՂԵՐ	հա	**242.18**	**241.02**

Հեռանկարում համայնքների մթնոլորտային օդի աղտոտման աղբյուրներ կհանդիսանան արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումները: Արտադրական արտանետումները հիմնականում առաջանում են բնական գազի այրումից: Ներկայումս համայնքներում ֆոնային աղտոտվածությունը աղտոտող բոլոր նյութերով զգալիորեն ցածր է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից (ՍԹԿ):

Մթնոլորտ վնասակար արտանետումների հիմնական մասը բաժին է ընկնում ավտոտրասպորտին, որի արտանետումները կազմում են մթնոլորտ արտանետումների 93,4 %-ը: Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը ջեռուցումից, արդյունաբերությունից և ավտոտրանսպորտից կազմում է 366,36 տ/տարի: Մթնոլորտ վնասակար արտանետումներից «Արմավիր-2» համայնքներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը կազմում է 9,314 մլն. դրամ տարի: Հեռանկարում արտանետումները ջեռուցումից կնվազի տարեկան 42,8 տ/տարի ի հաշիվ ջեռուցման նոր տեխոլոգիաների:

Տնտեսակենցաղային հոսքաջրերի մաքրման համար գյուղական համայնքներում, նախատեսված է տեղադրել տարբեր արտադրողականության «Յալմա-2000» մակնիշի կենսաբանական մաքրման կայան: Մաքրման կայանը ունի բազմաստիճանային մաքրման կառուցվածք և ներառում է սեպտիկ խուց, անաերոբ կենսաբանական ռեակտոր, կենսազտիչ

առաջին և երկրորդ աստիճանի օդավորման ավազան (աերոտենկ), երկու պարզարան, պոմպային հատվածամաս: Մաքրման արդյունավետությունը 98%:

Արմավիրի տարածաշրջանի համայնքներում հեղեղատար կոյուղու բացակայության արդյունքում գարնանային ձնհալի և աշնանային հորդ անձրևների ժամանակ հնարավոր են տարածքների հեղեղումներ: Այս երևույթից խուսափելու նպատակով բոլոր համայնքերի համար հեռանկարում նախատեսվում է հեղեղատար առուների նախագծում և կառուցում:

Բնակավայրերին, հատկապես կառուցապատված տարածքների բնական վտանգավոր երկրաբանական երևույթներից են նաև սողանքները: Սույն նախագծով առաջարկված է "Արմավիր-2" բնակավարի սողանքներից պաշտպանության միջոցառումների նախատեսում:

Հեռանկարում տարածական պլանավորման նախագծերի իրականացման արդյունքում հողերի աղտոտվածության մակարդակի ավելացում չի սպասվում, քանի որ նոր արդյունաբերական ձեռնարկությունների կառուցում չի նախատեսված:

Յուրաքանչյուր գյուղական համայնքում տեղակայված է 1 գերեզմանոց: Ընդհանուր թիվը կազմում է 10 հատ, իսկ ընդհանուր տարածքը կազմում 20հա: Գերեզմանոցները գործող են: Ծրագրով նախատեսված է գերեզմանոցների պարսպապատումը ՍՊԳ-ի չափերով հետագա հուղարկավորումների ընթացքում այն չխախտելու համար: Այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում: Գերեզմանոցների ճանապարհի եզրային հատվածներում, նախագծով նախատեսված է տարածքի բարեկարգում և կանաչապատում, ինչը կնպաստի փոշու արտանետումների տարածման կանխարգելմանը:

Ներկա դրությամբ գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկները (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներևայլն) ընդհամենը կազմում են 1,1հա: Շինարարական նորմերի համաձայն գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների մակերեսը պետք է կազմի 12մ^2 /մարդ, իսկ փոքր քաղաքների համար 10մ^2/մարդ: Տնամերձ հողամասերում կանաչապատման մասը տատանվում է 0.5-ից 0.56: Համանքներում ընդհանուր օգտագործման տարածքը կկազմի 25,182 հա, իսկ սահմանափակ օգտագործման կանաչը շուրջ 1224,072հա:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կանոնակարգելու նպատակով մշակվում է մոնիթորինգի պլան, որի միջոցով հնարավոր է ժամանակին և հավաստի տեղեկատվություն ստանալ շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչների վրա եղած բոլոր ազդեցությունների վերաբերյալ և ժամանակին կարգավորել՝ սահմանափակել դրանք: Շրջակա միջավայրի պահպանության և առողջացման նպատակով մշակված մեղմացնող միջոցառումները նախատեսվում են նախապատրաստման, շահագործման և վերակուլտիվացիայի փուլերի համար: Մթնոլորտային օդի որակի գնահատման մշտադիտարկումների համար նախատեսվող սարքավորումների տեղադրման վայրերի որոշմանը մեծապես օժանդակում են եղանակային պայմանները, տոպոգրաֆիան: Մթնոլորտային օդի որակի մշտադիտարկումները պետք է իրականացվեն բավարար հաճախականությամբ, իսկ դրանց արդյունքները ենթարկվեն ստուգման: Ստացված արդյունքները պետք է լինեն հասանելի հանրության լայն շերտերի համար: Շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիթորինգն ընդգրկում է՝

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ,
- հողային ավազանի որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ,
- ջրային ավազանի որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ

Պատճառաբանական մաս. Արմավիրի քաղաքապետարանում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն և Արմավիրի մարզպետարանը:

Փորձաքննական պահանջներ

Հիմնադրութային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հայնախագիծ» ԲԲ ընկերության կողմից ներկայացված Արմավիրի մարզի Արմավիր-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի մշակման ՇՄԱՌԳ հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան